Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (6 դասաժամ), աշխարհագրության (11 դասաժամ), հայ եկեղեցու պատմության (5 դասաժամ), դասվար (20 դասաժամ), մաթեմատիկայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբախշման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
անձը հաստատող փաստաթուղթ,
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
ինքնակենսագրություն (Ձև 5),
այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերը ընդունվում են **նոյեմբերի 8-ից նոյեմբերի 21-ը** ներառյալ,սույն հայտարարության հրապարակման օրվանից, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15: 00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 23-ին, ժամը՝ 14:00-ին** ՀՀ Սյունիքի մարզի Եղվարդի միջնակարգ դպրոցում:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Տեղեկությունների համար զանգահարել 093165222: